ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2023 թվականի N 1402-Ա

ՎԻՐԱԲ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ՈՐԴՈՒՆ՝ ԱՐԱՄԵ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՔ ԲԱԺՆԵՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստան Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով հիմք ընդունելով Վիրաբ Ավետիսյանի 2023 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 6412 դիմումը՝ իր անչափահաս որդուն՝ Արամե Վիրաբի Ավետիսյանին /ծնվ. 18.03.2008 թ./ պատկանող Արմավիրի մարզի, Արմավիր համայնքի, Սարդարապատ գյուղի 11-րդ փողոցի 35 բնակելի տունը վաճառելու վերաբերյալ, Արմավիրի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 20 նիստի արձանագրությամբ տրված դրական եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Թույլատրել Վիրաբ Վաղինակի Ավետիսյանին /ծնվ. 31.08.1965թ./ վաճառել իր անչափահաս որդուն՝ Արամե Վիրաբի Ավետիսյանին /ծնվ. 18.03.2008 թ./ պատկանող Արմավիրի մարզի, Արմավիր համայնքի, Սարդարապատ գյուղի 11-րդ փողոցի 35 բնակելի տունը:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

23 նոյեմբեր, 2023
Ք. Արմավիր